

6/21  
2-30

252

90  
15 FEB 2007

ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԳԵՂԵՐԱՍ. ԽՈՐՀՐԴԵՏԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«Գրականության» քոլեկտիվի արխիվում պահվող փայտե քարտեր

# ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ Գ Ե Ր Ի Ն Ե Ր Ի Ն

ՈՂՋՈՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

341.3  
2-30

ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԳԵԿԸՆ ԳՈՐԹԵՐԻ ԿՈՄՒՍՏԵՐԸՏԻ  
ԾՈՍԿԸ—1919

№ 33

Պրոկուրորն ու ատոր եղևոնեի, միացէ՛ք.

34131

2-30

ՀԱՅՐԵՆԻՔ ԿԵՐԱԴԱՐՁԱԾ

Գ Ե Ր Ի Ն Ե Ր Ի Ն

ԻՆՋՈՅՆ ԽՈՐՀՐԵԱՅԻՆ ԴՈՒՍԱՍՏԱՆԻՑ

ՍՏՈՒԳ-ԼԱՅ Է  
1919 թ.

344.3.20

3965

278

11 0 JUN 2013

34. 431



### ՈՂՋՈՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍՍՏՅԱՆԵՑ

Հայրենիք վերադարձած զերիններին

Չորս տարի սրանից առաջ ամբողջ աշխարհի բուրժուազիան չեքիւրեց արիւնոտ սպանդանոցը: Քունի ոյժով և խաբէութեամբ միլիոնաւոր աշխատաւորներ իրար դէմ հուի էին հանւած: Խաբէութեամբ և զախ ներշնչելով, ստիպում էին նրանց միմեանց ոչնչացնել և շուտով Եւրոպայի դաշտերը ծածկեցին ընկած դիակների կոյտերով: Ձեր աչքերի առաջ ոչնչանում էին հողաբաւոր ճարգիկ, այլըւում էին քաղաքներ ու գիւղեր, ոչնչացւում էին անասուններն ու ցանքսը, այլըւում էին անտառներ՝ խողաղ բնակչութիւնը սարսափահար փախչում էր: Իսկ դուք կենդանի մնացածներդ, վիրաւորւածներդ, հաշմանդամ վարձածներդ շրջապատւելով և չկարողանալով դուրս պրծնել գէպի ձեր եղբայրների կողմը, ընկաք գերի և աշխատւում էիք գերիների բանակատակիում, որտեղ ձեզ վարձրին աշխատաւոր անասուններ: Ցարական կառավարութիւնը չսովորացրեց օտարների յարգելու ու բանւորներին ու զիւղացիներին, իսկ այնտեղ, գերութեան



Ցարական Ռուսաստան, Հայկակ. Կոմիտասը, Մոսկւա, Արմեանոկիս փ., տ. 2  
 Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянский пер., 2

255-93

մէջ, զուք համբերութեամբ տարաք ամեն տեսակի ձեռ ու վարկնի վերարերմունք: Մարդիկ այստեղ շատ ու գեղեցիկ բաներ էին պատմում ձեր տան-  
 չանքների մասին: բուրժուազիան, կարածաակերերն  
 ու կապիտալիստները, այդ խօսքերը շահագործե-  
 լով՝ մեծ գումարներ էին վաստակում, և նորանոց  
 միլիոններ աշխատաւորների շարքերից ուզար  
 կում էին մեռնելու իրանց բուրժուական շահերի  
 համար: Այժմ դուք բոլորդ տեսա՞ք, թէ ի՞նչ բա-  
 նի համար էր լերիւքւած անիժւած պատերազմը:  
 Ո՞վ էր դէմ այդ կուրին, ո՞վ էր որ հինց առաջին  
 թակ օրերից այստանձրեց նրա դէմ: Միայն մե՞նք  
 մեծամասնականներս, յեղափոխական պրոլետարիա-  
 տի և ազբատ զիւղացիութեան կուսակցութիւնը:  
 Մեր շահը նրանում է կայանում՝ որ 1917թ. փետրուա-  
 րին՝ հոլրերին էլ հասկացնել տէինք բանի կութիւնը,  
 թէ ո՞վքեր են մեզաւօր բոլոր թշւառութիւննե-  
 րի համար և բանւօրներն ու զիւղացիները միանալով  
 տապալեցին Ռոմանօվների փէլած դահը:

Բայց այդ շարժումը նանապարհի կէտին կանց  
 չառաւ: Փողօգուրդն ուզում էր ճիշտ կերպով բմ-  
 բունել, թէ ինչու համար է շարունակուում պա-  
 տերազմը: Ժամանակաւօր Կառավարութիւնը  
 գործում էր Փրանսիական, անգլիական, ամերիկա-  
 կան, եսպանական և իտալական բուրժուազիայի  
 հետ, նա ծածկելով ժողովրդից զազանի գաշնա-

զրերը, շարունակում էր գօշել, պատէրազմը պի-  
 տի շարունակել մինչև վերջնական յաղթանակը:

Ազատութիւնը ձեռք էր բերւած ամբողջ ժո-  
 ղովրդի ձեռքով, բայց բոլորը չէին կարողանում  
 նրանից հաւասար կերպով օգտուել: Ազատութիւն  
 կար, իսկ հող չկար: Ժամանակաւօր Կառավարու-  
 թեան օրով զիւղացին էլի նօյն դրութեան մէջ էր  
 գտնուում կալւածատէրերի վերարերմամբ՝ ինչպէս որ  
 ստալ:

Բանւօրը կատարեալ ազատութիւն էր պա-  
 հանջում: Նա տեսնում էր, թէ ինչպէ՞ս Փարրի-  
 կանտներն ու վաճառականները զիշատիչներ էին  
 պատեր, արիւնի և արցունքի միջից միլիոններ էին  
 զիղում, իրենց ցանկութեամբ գներ էին նշանա-  
 կում և ապրանքներն ըստ իրենց հայեցողութեան  
 բաժանում: Եւ նոքա պահանջեցին օրպեսզի, թէ  
 Փարրիկաններում և թէ գործարաններում լինի բան-  
 ւօրական վերահսկողութիւն:

Յեղափոխութիւնից յետոյ, զինւօքն աւելի բան  
 ազատ գարձաւ:

Բայց բուրժուազիան գեներալների միջոցով  
 իրա նպատակին հասաւ, շնորհիւ աշակողմեան օս-  
 ցիալիստների, Կերենսիօւն, Չերնօվին, Յերեակ-  
 լաւն, Սափինկօվին և ուրիշներին՝ ցարական շուն  
 գեներայ: Կարնիլովի պահանջները հաւանութիւն

գտան և զօրածակատում մահւան պատիժը վերահաստատուեց:

Իսկ ժողովուրդը արանջում էր:

Բանւորները, զիւղացիներն ու զինւորները անտան որ իրանց խարում են և որ իշխանութիւնը փաստօրէն բուրժուազիայի ձեռքումն է: Եւ նրանք պահանջեցին որ հեռացւի բուրժուազիան և իշխանութիւնը յանձնւի Խորհուրդներին:

1917թ. Հոկտեմբերի 25-ին բանւորների, զիւղացիների և զինւորների ձեռքով ստեղծուեց մի նոր կառավարութիւն, բանւորա-զիւղացիական հասարակապետութիւնը: Այդ կառավարութեան զլուխն անցան բալշեխները-կոմմունիստները

Նոր կառավարութիւնն աշխատում էր կապիտալիստների ձեռքով ստեղծուած պատերազմին վերջ տալ: Նա բոլոր պետութիւններին առաջարկեց անմիջական հաշտութիւն: Օտարերկրացի բուրժուաներն այդ բանը չէին ցանկանում: Այն ժամանակ մենք վերջ տւինք այդ աւազակային միտումներով սիւսած պատերազմին, չնայած որ հանգստամիջոցը ծանր և թանկ գնով ձեռք բերինք: Ու միջիայն շնորհիւ զօրան զուք կարողացաք տուն վերադառնալ: Եթէ չլինէր այդ չեղաշրջումը—մինչև օրս էլ զուք գիտի տանչէիք Շտեյդեմիլում, Գելլոբերգում, Մերդերուրգում և ուրիշ տեղերում. զուք մինչև օրս էլ պիտի տասնեակներով թաղւէիք

ու կենդանի փթէիք: Եւ նոր հանրապետութեան տուաչին դեռ պանր, բնի. Եօֆֆէն Բերլինում կարժիք զբոշակ բարձրացրեց զերմանացի ժողովուրդ խեղդողների կենտրոնում, և առաջինը նա ձեզ օգնութեան հասաւ: Շնորհիւ մեր հոգսերի, մեր զերիների հետ սխեցին վարւել այնպէս՝ ինչպէս որ վարուած են Ֆրանսացի, Անգլիացի և ուրիշ տեղացի զերիների հետ:

Խորհուրդների որոշմամբ, յուլիս ամսին նրանց համար ուղարկուեց 25 միլիոն ռուբլի, և էլի կուղարկւի, եթէ կարիք զգացւի, որպէսզի կարելի լինի գերիների դրութիւնը միանգամ ընդ միշտ լաւացնել:

Մենք հոգը կալւածատէրերի ձեռքից առանք և յանձնեցինք աշխատաւորներին: Իուք կուի գնացիք իրրե կալւածատէրերի տորտեր—այժմ վերադարձէք իրրե ազատ հողագործեր, ազատ հողի վրայ աշխատելու: Եթէ չհերիքի ձեզ ձեր հոգը—միացէք աշխատաւորական կոմմունիստներին, հոգը միասին մշակեցէք: Ձեզ կօղնի այդ գործում հողագործութեան կոմիսարիատը:

Մենք բանկիրները ձեռքից վերցրինք մասնաւոր բանկերը և վերածեցինք համաժողովրդական գրամատներու:

Բոլոր մեծ ձեռնարկութիւնները, Փարրիկներն ու գործարանները, երկաթուղային գծերն ու խո-

չոր չբացին ճանապարհներն ինչպէս և նաւապնա-  
 ղութիւնն ու հանքերը պաղարեցին վանառա-  
 կանների ու բանկիրների կայք լինելուց և դաշտն  
 ժողովրդական սեփականութիւն: Ամեն տեղ անց-  
 կացրին ութժամեայ բանւորական օր, անգործների  
 համար Աշխատանքի սակարան բաց արին, հաս-  
 տատում են սոցիալական ապահովութեան հիմ-  
 նարկութիւններ, որպէսզի ծարղիկ ապահովւած լի-  
 նեն ձերութեան, անգործութեան և աշխատանքի  
 անընդունակ լինելու գեղքերում: Արդիւնագործու-  
 թեան վրայ, զրին բանւորների կոնարք, ամբողջ երկիրը  
 ծածկեցին արհեստակցական միութիւններով, բան-  
 ւորա-գիւղացիական Խորհուրդներով, չքաւորների  
 կոմիտեաներով և աշխատաւորական կոմիտեանե-  
 րով:

Զինւորների համար մտտական 250 ր. ոստիկ  
 նշանակեցին: Եթէ այդ բոլորը համեմատենք այն  
 պայմանների հետ, որոնք գոյութիւն ունէին կուլիից  
 առաջ, ապա այն ժամանակետիւրով դուրս կդաւ սք  
 օրական մենք ամեն մէկին 25 րուբլի ենք տալիս  
 և ամեն բան էլ պատրաստի: Բացի այդ, տարե-  
 կան էլ երեք հազարական րուբլի կենսաթոշակով  
 ապահովեցին նրանց:

Եւ զու կորոզ ես ամեն մի բարձր պաշտօն,  
 մինչև իսկ զօրքի հրամանատարութեան պաշտօն  
 ձեռք բերել՝ էթէ միայն ունես զու ազգմական ընդու-

նակութիւն և պատերազմական դործին ծանօթ ես:

Բոլոր ուսումնարանները, մինչև իսկ համալ-  
 արանները, զարձրին ձրի. թող սովորի ով ուզում  
 է և որտեղ կամենայ, ոչ մի կոչումագիր ու վկա-  
 յական հարկուօր չէ, միայն թէ լինի ցանկութիւն  
 և առողջութիւն:

Բոլոր նորութիւններից մենք այստեղ միայն  
 դիտաւորներն ենք թւում:

Ինքներդ կտեսնէք թէ՛ ինչպէս՝ է փախել  
 ամբողջ կեանքը:

560

Բայց մի մտանաք, որ բոլոր երկրներում մեր  
 ղէմ սպասազինւել են թշնամիները: Կալւածատէրերը  
 չեն ուզում միանգամ ընդմիշտ բաժանւել հողից ու  
 գիւղացու ձրի աշխատանքից, վանառականներն ու  
 Փաբրիկանտներն չեն ուզում բաժանւել իրանց վիթ-  
 խարի, առասպելական շահերից ու քաղցր կեանքից,  
 հօգևորականութիւնը չի կամենում զրկւել ձրիակե-  
 րութիւնից և ազատ ու կուշտ փարով հաց ուտելուց:  
 Տարուսանների որդիքը, և նրանք ովքեր որ կօշիկ-  
 ների խթանները զնգզնդ ացնելով էին ման գալիս ու  
 պարծենում էին փայլուն կոծակներով, չեն կամե-  
 նում ընդ միշտ հրաժարւել իշխանութիւնից: Դաշ-  
 նակից պետութիւններն աւելի ևս զալրացած են  
 մեզ վրայ: Մենք նրանց բոլոր գաշնագրերը բայց  
 արինք, ցոյց տւինք, թէ ովքեր են նրանք և ինչու  
 համար են պատերազմում մրմբանց ղէմ, տասնեակ

միլիարդ պարտքերը, որ նրանցից փոխարինարար վերցրել էին զարր, կարածատերերն ու կապիտալիստները, մենք վճարելուց հրաժարուցինք, և չենք էլ ուզում այլևս նրանց զօրք տալ սպանդանոցի համար, չենք ուզում նրանց հետ դաշնակցութեան մէջ լինել և կռիւ ծղել մինչև վերջնական լաղթանակը:

Եւ այս բոլորից յետոյ նրանք սկսեցին մեր դէմ արշաւանք կատարել: Ապստամբութիւններ են սարքում նրանք, իսկ մենշեիկներն ու էսեքները բուրժուազիայի հետ միասին են դարձում և դնում են Խորհուրդ-ները դէմ:

Հիւսիսից՝ արշաւելով մեր դէմ, նոքա զբաւեցին Սպիտակ ծովի ափերը, Մուրմանի ճանապարհը, Արխանգելսկը, Օնեգը: Արևելքից նոյնն են անում եսպոնացիներն ամերիկացիների հետ: Չեխօւղովաիները նրանց փողով անցնում են ամբողջ Ռուսաստանով և աշխատաւորների թշնամիների հետ քաղաքներ են զբաւում, հողը վերադարձնում են կարածատերերին, աղքատ ժողովրդին թշուառացնում են, բանւորներին քաղցածութիւնով են տանջում, ինչպէս և ամբողջ Ռուսաստանին:

Ահա այդ բոլոր թշնամիների դէմ մենք կռիւ ենք մղում: Դուք ինքներդ հասկանում էք, որ այս

կռիւք ուրիշ անսակի կռիւ է: Այստեղ ժողովուրդը դիտէ թէ ինչու համար է տանջւում, և ինչու համար մարտնչում:

Բոլորը չի՛ կարելի պատմել մի փոքրիկ թեքթիկում, ինքներդ լաւ նայէք, բայց չսէք նրանց, ովքեր որ իրենց անբաւականութիւնն են յայտնում Ռուսաստանի Սոցիալիստական Ճեղերատիւ Խորհուրդային Հանրապետութիւնից ու Ռուսաստանի կոմմունիստական կուսակցութիւնից-բայլէիկներից:

Մանթօյէ՛ք մեր կուսակցութան հետ, մտէ՛ք մեր շարքերը, ինքներդ կոււցէք, ձեր ոյժերը աւէք նոր Ռուսաստանին:

Սով է աիրում այժմ նրանում—անտեսական քայքայումը մեծ է, բայց դուք լաւ դիտէք թէ ինչպիսի քաղցածութիւն ու քայքայում է տիրում ամենուրեք: Յեղափոխութեան թշնամիներին ոչնչացրէք, որոնք կփորձեն ձեր խղճին խայթ լինել: Դուք դնացիք ամբողջ իսկ վերադառնում էք զրեթէ բոլորդ էլ հիւանդ: Դրանում մեղաւոր են նոքա, սոցիալիզմի թշնամիները, աշխատաւորների լիովին ազատագրման կողմնակից չեղողները:

Իսկ աշխատաւորների կատարեալ ազատազրման և ժողովրդի լիովին հաւասարութեան համար կոււցէ և Ռուսաստանի կոմմունիստական կուսակցութիւ-

նր, որի գրոշակի վրայ բանասերների ու զիւզացի-  
ների—խղափոխութեան զինւորների—տուք արիւ-  
նով գրւած հետևեալ խօսքերը են վառվառւմ:  
«Պրոլետարներ բոլոր երկրների միացէ՛ք»



3965

«Ազգային գրադարան»  
  
NL0217291

34. 431

Գինն է՝ 1 ր. 50 փ.